

պարսից սահմանում կան մի քանի հայաբնակ և թիւրքաբնակ գիւղեր, որ մի ժամանակ դառնա-վում էին Ահմեդ խան անունով մի նշանաւոր աւազակի իշխանութեան տակ: Գիւղացիները այդ հրէշի ձեռքից բաւական ժամանակ անջնջվելով, վերջապէս նրանցից մի քանիսը դանդաղորդ դիմում են կառավարութեան, որը այդ խանին կաշառ-վելով, վերադառնում է դէպի այն գիւղերը, որ-տեղից նրա դէմ դանդաղորդ էին: Արեւմտեան լինելու համար, սկսում է գաղանային անգլիո-թեամբ չարչարել գիւղացիներին և յաջողակում է նրանց ունեցածը: Եւ ակնհայտ է, որ այդ գիւղում կարգաւորում անուշով տանուտերից սարսափելի գանահարութիւնից յետոյ առել էր 350 թուման փող, և բաւականաչափ նրա ունե-ցած եղանակից և գոմէշներից, բայց դրանից, խա-նը իրեն համար հնձել էր տալիս նորա արտը, բայց ինչու չէն դանդաղորդ, կը հարցնի ըն-թերցողը: Երբ դանդաղորդ են, կառավարու-թիւնը բռնում է տանում խանին, չարչարում, ունեցածը խլում և սոված գայլի նման բաց թո-ղում: Այնուհետև կողոպտված խանը սկսում է իր տուած կաշառքները, առգանքները դարձեալ ողորմելի գիւղացիներից յետ տոտաւ: Այդ գիւ-ղերից մօտ 60 ընտանիք պատրաստվում էին Արաքսի միւս ափը անցնելու ուստաց հողի վրա:

ՆԱՄԱԿ ԹԻԻՐԳԻԱՑԻՑ

Կ. Պոլսի, 2 յուլիսի 81

Օրուայ լուրը այստեղ մարգիւղ Օֆ Բաթի գալն է, յայտնի է, որ սա հայոց խնդրի գլխա-ւոր փաստաբաններից մինն է անգլիական պար-լամենտի մէջ և իր Կ. Պոլսի գալը անշուշտ յա-րակցութիւն ունի իր պաշտպանած դատի հետ: Մինչդեռ ազգային ժողովի չնորհւ ինչ ցաւալի զուգահեյտութիւն՝ մարքիւղի դալը և ազգի ներ-քին յարաբերութիւնները այսչափ տնկ կերպա-րանք ստանալը: Աստուածն իր դատաստանն ա-նէ այդ ժողովի վրա, որից հանդուրժիւն չէ ունեցել ոչ մի պատրիարք, Խրիմեանից սկսած մինչև Ներսէսը: Ամեն տեղից լսվում է այժմ, որ Ներսէս պատրիարքը իր հրաժարականը ետ առնելու պայմանը պիտի դնէ Կ. Պոլսի ազգային ժողովի ժամանակաւոր փակումը մինչև հայոց խնդրի վերջնալը: այս այն միակ միջոցն է, որ իր կարծական Ներսէսի կաշկանդված ձեռքերը զանազան դիմանքների և ատեանների պատասխա-տութիւններից: Ներսէսի հրաժարականը շատ հե-տաքրքիր երևոյթներ դուրս հանեց այստեղի մա-մուլի և ինտելիգենցիայի կեդրոնութիւններից: երևակայեցէք ձեզ, մինչև Ներսէսի հրաժարակա-նի խօսքը՝ երևան գալը բոլոր լրագիրները, մա-նաւանդ երկուսը, էլ գովասանք չը կար որ չը թափէին Ներսէսի վրա, բայց չէից որ պատրիար-քը զգուշանալով ազգային ժողովից ներկայացրեց իր ուղիմատումը, իսկայն այս ստոր արարածները պողիքը հանեցին և զանազան կողմից սկսեցին թափվել ազգային ժողով և Ներսէսի դէմ զանա-զան հարցադրումներ անել: Արշափ ստոր և դարչելի վարմանը, որ այստեղի ինտելիգենցիա-նի մէջ միայն կարելի է տեսնել... իսկ երբ այդ նոյն ինտելիգենցիան նշմարեց, որ ժողո-վուրդը այնչափ կատաղած է իր ջերմ սիրած հա-միլին չարչարելու համար, որ պատրաստ է մին-չև անգամ հազարներով թափվել ազգային ժողո-վի վրա բռնուցքով դուրս վաճաղելու համար նորա մէջ նստածներին, այդ ժամանակ ստորեկ մրո-տողները և պոռտախօսները փոխեցին լեզունե-րը, ասելով. «չստեղծ անհիմն» լուր կը տարածեն թէ պատրիարքի հրաժարականը յառաջ է եկած ազգային ժողովի տուած պատճառներից, բայց ազգային ժողովի և պատրիարքի մէջ չոչնչ և-ղած չէ» և այնու: Այդպէս այնչափ ստոր են, որ տեսնելով, թէ վեհաձեռն պատրիարքը ազգասիրու-թիւնից ոչոքին չէ ասում իր հրաժարականի պատճառը, ներքին անպիտանութիւնները օտար-ներին չը յայտնելու համար, օգուտ են քաղում այդ վեհաձեռնութիւնից և պատրիարքի սիրած ա-ւելի խոցողում: Գոնէ ամաչելն օտար լրագիր-ներից, ինչպէս «Stamboul» և «Phare du Bos- phore», որոնք տեսնելով պատրիարքի հրաժա-րական աւելի անպատեհութիւնը և վնասը հայոց խնդրին, ամբողջ առաջնորդող յօդուածներ են նուիրում Ներսէսին, յանուն եղբայրսիրութեան

դէպի հայերը, աղաչելով և յորդորելով պատրիար-քին արհամարիւ ստոր ինտելիգենցիան և կուրա-ցած շահախնդիրներին, իր տեղը մնալու և հայոց բաղդը որոշելու համար: Եւ անտարբերական են յիշատի և իրատական հայ մամուլը համար այդ աղնու օտարների գրուածները, բայց միթէ այստեղի ինտելիգենցիան «աղնուութեան» որ և է չնչին չափ ունէ, որ հասկանայ ու գնահատէ ազգային երևոյթները: Ինչպէս ամբողջ տէրութիւնն է փոսած, այնպէս էլ փոսած է մինչև ծուծը Կ. Պոլսի հայ ինտելիգենցիան, որը սակայն յան-դգնում է մտածել Հայաստանի «բարոյական և մասնաւոր դարգացման զեկավարողը լինել»:

Հիմայ, որ մեր աչքով ենք տեսնում այս ա-մենը, միթէ կարող ենք որ և իցէ ժամանակ հաւատալ սոցա ճառերին և հայրենասիրական կեղծ խօսքերին, ամեն բան, ամեն խօսք, իւրա-քանչիւր քայլ և շարժումը կեղծ է, խարեւա-յական և շահախնդրական այստեղի ինտելիգեն-ցիայի մէջ: Իսկ ինչ կը վերաբերվի միջին և սը-տոր դասակարգին, ուրախութեամբ և պարծա-նով պիտի ասած որ նա անմասն է իր ճշմար-տութեան, անդաւաճան ազգասիրութեան և ան-խար զգացմունքի մէջ. նոյնը չէ միթէ և այդ-տեղի հայերի մէջ. ով էր և որ դասակարգը ան-ցեղաւ տարուայ սովի ժամանակ և միշտ եղբայ-րական անկեղծ սէր և գութ ցոյց տուող...

Հնա, լաւ միտա եկաւ: այստեղի սովելոյ յանձ-նաժողովից եկաւ ինձ մօտ պաշտօնական յանձ-նարարութեամբ յայտնելու յանձնաժողովի դար-ղը և «Մշակի» միջոցով իր անաղին կորստեան մի եւք զտնելու: Բանը նորանունն է, որ անցեալ տարուայ սովի ժամանակ, յանձնաժողովից ուղեղ է Լեւոնիսին մօտ ութ հազար ոսկու ստացալով, որ իր թէ կարելի լինի այդ գումարի ստա-ցազրեմով իրախուսել նախարարներին իրանց ստած փողերի մասին չոչնչի կաշառութե-թիւն և անդորրագրի ներկայացնելով: սովելոց անունով ստացած փողերի փոխարէն տուած թէ ոչ Լեւոնիսին յանձնաժողովի ութ հազար ոս-կու ստացալով: Բոչափ գումար կարողացաւ հաւաքել Լեւոնիսին՝ մինչև հիմայ յանձնաժո-ղովը չէ կարողանում ոչինչ իմանալ ամբողջ տարի մի քանի տասնեակ նամակներ գրելով Լեւոնիսին: Գնահատելով ասում է. եթէ Լե-ւոնիսին չը կարողացաւ ոչինչ հաւաքել, թող դոնէ մեր ուղարկած անդորրագրերը յետ ու-ղարկէ, որ դորանով վստահանանք թէ յիշատի սովը ոչինչ չէ տուել մեզ Լեւոնիսին ձեռքով: ոչ անդորրագրի կայ, ոչ փող և ոչ պատասխան: զեհ, այսուհետև թող զանազան լրագիրներ մե-ղադրեն «Մշակին»: «չափազանց անաղաղու-թեան համար» Լեւոնիսին դէմ: Ինչու և ասու-ծու, որ անցեալ տարի իմ աչքին առաջ էին կարտում Ախալցխայի կանաչ եկեղեցու մէջ ի-րանց գլխի ոսկիները Աղվինեան եպիսկոպոսի տուփը լցնելու համար «յանուն սովելոց»: Այդ սովելաները մինչև հիմայ դեռ սպասում են, բայց Աստուծոյն այնպէս է լուր, որ կարծես պատրաստվում է այն աշխարհը գնալու: Հայաս-տանի սովելալ որբերին այնտեղ օգնելու համար... Արեւմտ կրկնում եմ որ սովելոց յանձնաժողովը յաւանաւանելով, իր դատը գցում է «Մշակի» խմբագրատուն: Ինչպէս ուզում էք, այնպէս ա-րեցէք...

Նամակս վերջացրած մի սրտալուրդ դէպք տանն ու վրա արեց մօտ նստած մի քանի բա-րեկամների տրամադրութիւնը: ներս մտան տու-մի տաս հայաստանցի պանդուխտներ, որոնք մի վայրկեան փետուրած կանգնելուց յետ, յանկարծ այնպիսի բուռն հեծեմանը բարձրացրին, որ ամբողջ տունը թնդած կորովի տղամարդիկների ձայնից: Ամենքս մնացինք շփթեմով. «Ինչ կայ, եղբարք, իսոմ թշնամու տանը չէք, ամենքս էլ եղբայր ենք, ասեցէք, ինչ ունէք»: ամեն կող-մից սկսեցին հարցնել: Ել չը կարողանալով ոչ մի բառ արտասանել, ամեն կողմից մեկնեցին աղերսագրեր, որոնցից մինի պատճէնը աւելորդ չեմ համարում գնել այստեղ, ահա: «Մէկ տարի մնէ այստեղ առանց գործի մնալով, օր աւուր պարտք ընելով սպրած եմք, հայրենացայ մէջ մեր ընտանիք իւր թշուառ վիճակ կողբայ և հոն գտնուող պարտքի տէրերն ամիս անգամ մեզի նամակ կը խաւրեն: ոչ կրնամք երթալ և ոչ ալ այստեղ գործ մը կրնամք գտնալ: Եթ-մայ վեր Աստուած, հոս տեղ դու: մեզի կամ գործ մը գտեք կամ աղատեցէք մեզ պարտքի գերու-թենէ մեր դակաց և ընտանեաց երես տեսնե-լու համար»: Ահա ձեզ այս չորս տողերի մէջ

այստեղ քսան հազարներով մաշվող պանդուխտ-ները վիճակը: ասեցէք խնդրեմ, ինչ է հարկա-ւոր սոցա աղատելու համար, «Եթայ թէ Հա-յաստանի զանազան կենտրոններում փոքրիկ բանկեր, երկրագործութեան և արուեստների աստիճանաբար տնտեսական կրթութիւն և այլն այսպիսի գործնական միջոցներ չորս կողմը սքու-լած հարկւր հազար հայ գերիներ ազատելու համար, թէ Վիկտոր Հիւգօի բոժանների թարգ-մանութիւնը, Ինչպէս ասեցի անցեալ նամա-կումս, հայ պանդուխտներին պարտքի մէջ գե-րի պահողները գլխաւորապէս Հայաստանի վաչ-խառու հայերն են: ուրեմն հարկաւոր չէ սոցա դէմ մի միջոց փնտրել: Բայց ինչ եմ ասում և ում համար: Կ. Պոլսի գործիչներին շատ դարտն է, որ թիւրքաց Հայաստանում այսպիսի չարչա-րանքներ կան: սոցա հարկաւոր է իրանց ա-նուշները հուշակել տալ և այդ էլ կարելի է միայն ճառեր խօսելով և հրաւերներ գրելով ա-նել, որ սոքա շատ բարեխղճաբար կատարում են, էլ ինչ հարկաւոր է ընկերութիւններին շատ զլուխ տրաքացնել Հայաստանին իրական ա-պէս օգնելու համար: Ահա որչափ կարողացաւ աղել «Մշակը» սոցա վրա, այսչափ տարի ուղեւոր սոցա իր գեղիցը իրական Հայաս-տանը ճանաչելու համար: Ա՜հ է սոցա իրա-կան Հայաստանը: չը լինի թէ 17 հազար (?) «չոյտով» կերակրվող երեխաները, որոնցով սո-քա իւրաքանչիւրի առաջ պարծնաւու պատրուակ են դառն հիմայ: Աշխարհը կը փոխվի, Կ. Պոլսի «գործիչներ» աստիճանի դարգաւառանութիւնը չի փոխվի, վստե որոյ թող «Մշակը» հա-տատ մնայ իր մշտական համադմունքի մէջ: Հայաստանի բարեբաւերներին Հայաս-տանի մէջ միայն ցոյց տալով:

Գրիգոր Նիկողոսեան

ԱՐՏԱԿԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լրագիրներին Կ. Պոլսից հեռագրում են, թէ հաստատ աղբիւրից լսվում է, որ սուլթանը մահ-վան պատի տեղ նշանակեց ամբողջ կանաքի աքսոր սուլթան Արզուկ Աղվին սպանողների համար: Ներքին գործերի մինիստրը հրամայեց Տրիպոլիսի նահանգապետին՝ արգելել եւրօպա-ցիներին Տրիպոլիսում ճանապարհորդել առանց սուլթանի առանձին ֆիրմանի: Հաւատացնում են, որ Հօրապա-փաշա Կ. Պոլսի է կանչված Միջերկրական ծովում թիւրքաց նաւատորմի հրամանատարութիւնն ընդունելու համար:

—Լրագիրներին գրում են հետեւեալը: Իրան-գական գործերի պետական քարտուղար Ֆօրս-տերին իր Լանդա կան Կ. Պոլսից իր կողմից մի պատգամաւորութիւն ներկայացաւ հա-մայնքների ժողովի անդամ Օսկարիւմանի առաջ-նորդութեամբ և անգլիական ու իրանական բաղմաթիւ պատգամաւորների ուղեկցութեամբ: Պատգամաւորութիւնը զանգաւորում էր բնակա-րանների վատ դրութեան վրա, ամենաչնչին բը-նակարանի համար պահանջվող չափից դուրս մեծ գնելի վրա, և այն մեծ տարածութեան վրա, որ ատրված է լինում անցնել իւրաքանչիւր օր գիւղական գործաւորը դէպի գործելու տեղը: Պատգամաւորներից մէկը ցոյց տուեց վարձի պայմանագիրը, որով արգելում է ֆերմերներին գործաւորների համար խրճիթներ չինել: Ֆօրս-տեր ցոյցաւորեց գործաւորներին այդպիսի խնդ-րի վճելու: Գծաւորութիւնը, բայց խոստացաւ նրանց զանգաւորները ներկայացնել միլիտարների խորհրդի քննութեանը: Վերջացրեցին խնդրում էին նոյնպէս ընդարձակել իրանց բնորոշական իրաւունքները, և Ֆօրտերը նրանց յայտ տուեց, որ կառավարութիւնը կաշխատի բուռնաւորու-թիւն տալ նրանց պահանջներին: իսկ ինչ որ բնա-կարանների լաւացնելուն է վերաբերում, այդ բանի համար նա ոչ մի խոստումներ չը կարո-ղացաւ անել:

—«Times» լրագիրը հաղորդում է, որ հաս-տատութեան մէջ խնդրագիրներ են ստորագրվում յօդուտ Բրէզլի, որ թող տրվի նրան մանկ համայնքների ժողովում: Պատգամաւորները այդ խնդրագիրները կը ներկայացնեն հենց նոյն օրը, երբ Բրէզլի կը կրկին իր փորձը վերա-դառնալ պարտաւոր:

—«Neue Freie Presse» լրագիրը հաղորդում են հետեւեալ լուրը: Կ. Պոլսից: Իսկանդր հարց-րեց, այս օրերս, իր չընդատողներին և սիրե-լիներին, չը մտցնել արգեօք նորից Միդհաթի:

սահմանադրութիւնը: Նրանք ի հարկէ, պատասխանեցին, որ այդ գործը անժամանա-կեայ կը լինէր: Այս լուրը տպագրութիւն գոր-ծեց:

—Բերլինից լրագիրներին գրում են, որ հակա-առաջադիմականները և հակաեմիւսները Բերլի-նում Բալտտագի յառաջիկայ ընտրութիւններին ներկայացնում են իրանց սեփական կանգիդատ-ներին, որոնց թւում և բարձր Մենիգերոզէին, պրօֆէսոր Արզուկ Վալենթին, Կլեմէրին և Զեռ-կերին: Լէպցիգից պօլիցիան աքսորեց կրկին 22 սոցիալ-դեմոկրատներին:

—«Polit. Correspond.» լրագիրը հաղորդում է, որ հինգ բանտարկի վիճնայում, որոնք կազ-մում էին գաղանի ընկերութեան կենտրոնական մասնաժողովը, յանկարծ բռնկեցան և բանտարկ-վեցան պօլիցիայի ձեռքով: Վիճնայի սրճարան-ներից մէկի մէջ, որ հաւաքվել էին նրանք խոր-հրդակցելու համար:

—Ժընէվից «Wiener Allgemeine Zeitung» լրագիրը հաղորդում են, որ այնտեղ նորերումս սոցիալիստների մի մեծ ժողով կայացաւ: Նախա-գահում էին մի ռուս, մի ֆրանսիացի և մի տի-կին, ինչպէս ասում են, ռուս ժողովը վճեց որ պրօլետարիաներ, չընարեականներ և բրոշուր-ներ այլ ևս փոստով չեն ուղարկվի, այլ առան-ձին թղթատարների ձեռքով: վեց թղթատարներ արդէն նշանակված են: Այդ մարդիկը թղթերը ոչ թէ արկղերով կը տեղափոխեն, այլ կապելով իրանց սեփական մարմնի չորջը: Քաղաքներում առանձին վերատուգողներ կը լինեն, որոնց մօտ թղթատարները պարտաւոր են ներկայանալ և իրանց անձնագրութիւնը ծանօթացնել: Վե-րատուգողները, որոնք խոչոր բաժիններ կը կառավարեն, իրանց կողմից կենթարկվեն կա-տարող մասնաժողովին և պարտաւոր են հաշի-տալ նրանց իրանց գործողութիւնների համար:

«ՄՇԱԿԻ» ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՆԵՐ

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ. 9 յուլիսի: Պաշտօնա-կան հաղորդութիւն: Բանտարկված Գերֆ-ման կինը դիմեց յուլիսի վերջերում Կայս-րի ողորմածութեանը, խնդրելով մեղմացնել իր վրա կայացած դատավճիւր: Թաղաւոր Կայսրը յուլիսի 2-ին հրամայել բարեհա-ճեց կեանք շնորհել Գերֆմանին փոխարի-նելով մահվան պատիժը տաժանակիր աշ-խատանքներով աքսորանքի մէջ, անորոշ ժամանակով:

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ. 9 յուլիսի: Պետական բանկի 50% տոմսը առաջին շրջանի ար-ժէ 95 ռ. 78 կ., երկրորդ 94 ռ. 37 կ., երրորդ 94 ռ. 75 կ., չորրորդ 94 ռ. 50 կ., ներքին առաջին 50% փոխառութեան տոմ-սակը արժէ 222 ռ., երկրորդ 221 ռ., արեւ-ելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 92 ռ. 25 կ., երկրորդ 91 ռ., 87 կ., երրորդ 91 ռ. 81 կ., ոսկի 7 ռ. 81 կ.: Թուսաց մի բուրլ Լօնդօնի վրա արժէ 25,09 պէնս, ուստաց 100 ռ. Բերլինի վրա արժէ 215 մարկ 12 պֆ., ֆարսի վրա արժէ 265 Ֆրանկ 50 սանտիմ: Բօրսայի տրամադրու-թիւնը ամբար է:

Իւրաքանչիւր—հրատարակող ԳԵՐԳՈՐ ԱՐՏՈՒՆԻ

ԵՐԵՎԱՆԻ ԳԵՐԳՈՐ ԱՐՏՈՒՆԻ

ԵՐԵՎԱՆԻ ԳԵՐԳՈՐ ԱՐՏՈՒՆԻ

ԵՐԵՎԱՆԻ ԳԵՐԳՈՐ ԱՐՏՈՒՆԻ

ԵՐԵՎԱՆԻ ԳԵՐԳՈՐ ԱՐՏՈՒՆԻ

ԵՐԵՎԱՆԻ ԳԵՐԳՈՐ ԱՐՏՈՒՆԻ

ԵՐԵՎԱՆԻ ԳԵՐԳՈՐ ԱՐՏՈՒՆԻ

ԵՐԵՎԱՆԻ ԳԵՐԳՈՐ ԱՐՏՈՒՆԻ

ԵՐԵՎԱՆԻ ԳԵՐԳՈՐ ԱՐՏՈՒՆԻ

ԵՐԵՎԱՆԻ ԳԵՐԳՈՐ ԱՐՏՈՒՆԻ

ԵՐԵՎԱՆԻ ԳԵՐԳՈՐ ԱՐՏՈՒՆԻ

